Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
,,12,, 03 2020թ.
(արձանագրություն № 7)

Վավերացնում եմ
ռեկտոր Վ.Ուռուտյան
,,16,, 03 2020թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ կամ Համալսարան) գիտական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ձևավորվում է Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան և լուծում է ուսումնամեթոդական, գիտական, գիտատեխնիկական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:
2. Խորհուրդը կոլեգիալ մարմին է, որի կազմի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), արհեստակցական կազմակերպության ղեկավարը, ֆակուլտետների, մասնաճյուղերի ղեկավարները, ռեկտորի նշանակմամբ՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները,

ինչպես նաև ընտրովի անդամներ՝ Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան:

3. Ընտրովի անդամների համամասնությունը և Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները որոշում է Խորհուրդը՝ ռեկտորի առաջարկությամբ:

4. Խորհրդի անդամների թվի առնվազն 25 տոկոսը ուսանողներն են, որոնց առաջադրումն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական խորհուրդը, իսկ ընտրությունն իրականացնում է Համալսարանի ուսանողական խորհուրդը՝ իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Ի պաշտոնե և ռեկտորի կողմից նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել Խորհրդի թվակազմի 50 տոկոսը:

6. Խորհրդի մյուս անդամներն ընտրվում են Համալսարանի կառուցվածքային համապատասխան ստորաբաժանումների կողմից:

7. Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է՝ այդ ընթացքում անդամների մասնակի շրջափոխման հնարավորությամբ:

8. Խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ գաղտնի քվեարկության մասին:

II. Գիտական խորհրդի խնդիրներն ու իրավասությունները

9. Խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

10. *Համալսարանի Գիտական խորհուրդը՝*

1) հաստատում է իր կանոնակարգն ու աշխատակարգը,

2) քննարկում և ռեկտորի ու հոգաբարձուների խորհրդին առաջարկներ է ներկայացնում համալսարանի ուսումնական, գիտական հետազոտությունների

հիմնական ուղղությունների, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկայի ու ծրագրերի, գիտական կադրերի պատրաստման, միջազգային գիտակրթական համագործակցության հարցերի և ծրագրերի վերաբերյալ,

3) քննարկում և առաջարկություններ է ներկայացնում նոր ստորաբաժանումներ ստեղծելու մասին, հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը,
4) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր,
5) քննարկում և համապատասխան որոշումներ է ընդունում կրթության և գիտության զարգացման հիմնահարցերի վերաբերյալ,
6) հաստատում է ուսումնական պլանները՝ ըստ մասնագիտությունների,
7) քննարկում է ուսումնական գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում հաշվետվություններ և հաղորդումներ՝ կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,
8) ընդունում է որոշում նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու մասին և ներկայացնում այն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանը,
9) ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական և այլ կրթաթոշակներ տալու, Համալսարանի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու, լսարաններ, ստորաբաժանումներ անվանակոչելու մասին որոշումներ,
10) քննարկում և հաստատում է դեկանների, դեպարտամենտների պետերի, ամբիոնների վարիչների ու պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կանոնակարգերը, իրականացնում է դեկանների, դեպարտամենտների պետերի, ամբիոնների վարիչների ու պրոֆեսորների ընտրությունը՝ փակ

գաղտնի քվեարկությամբ, սահմանված կարգով շնորհում է դոցենտի և պրոֆեսորի կոչումներ,

11) իրականացնում է սույն կանոնակարգից բխող ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ,

12) հաստատում է բուհի ներքին կարգապահական կանոնները:

11. Խորհուրդը կարող է ունենալ մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է խորհրդի որոշմամբ:

12. Խորհրդի որոշումները կենսագործվում են ռեկտորի հրամանով:

13. *Գիտական խորհրդի նախագահը՝*

1) նախագահում է խորհրդի նիստերը,

2) վավերացնում է խորհրդի ընդունած որոշումները:

14. *Գիտական խորհրդի նախագահի տեղակալը՝*

1) նախապատրաստում է խորհրդի աշխատանքային պլանը և նիստերի օրակարգային հարցերը,

2) կատարում է խորհրդի նախագահի պարտականությունները նրա բացակայության դեպքում:

15. *Գիտական խորհրդի քարտուղարը համալսարանի գիտական քարտուղարն է, որը՝*

1) նշանակվում է ռեկտորի հրամանով,

2) նախապատրաստում է խորհրդի նիստերի օրակարգերը,

3) կազմում և պահպանում է խորհրդի նիստերի արձանագրություններն ու որոշումները,

4) համակարգում է խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների աշխատանքները:

16. *Գիտական խորհրդի անդամը.*

1) մասնակցում է խորհրդի նիստերին ու նրա այն հանձնախմբերի աշխատանքներին, որոնցում ընդգրկված է,

2) հանդես է գալիս առաջարկություններով, նպաստում է խորհրդի արդյունավետ աշխատանքին,

3) կատարում է խորհրդի որոշումները, ինչպես նաև խորհրդի նախագահի հանձնարարությունները,

4) նիստերին չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում է խորհրդի քարտուղարին՝ հայտնելով չներկայանալու պատճառը,

5) նախապատրաստվում է հարցերի քննարկմանը և տալիս առաջարկություններ ընդունվող որոշումների վերաբերյալ:

17. *Գիտական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են՝*

1) խորհրդի ի պաշտոնե անդամի լիազորությունները դադարեցվում է տվյալ պաշտոնում պաշտոնավարումը ավարտելու օրվանից,

2) խորհրդի նշանակովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով,

3) Խորհրդի ընտրովի անդամի լիազորությունները դադարեցվում են խորհրդի լիազորությունների գործունեության ժամկետի ավարտին, եթե տվյալ անդամի մասին մինչ այդ խորհրդը այլ որոշում չի կայացրել,

4) ի պաշտոնե և ընտրովի անդամների լիազորությունները կարող են նաեւ դադարեցվել երեք անհարգելի բացակայության դեպքում:

18. Խորհրդի ընտրովի անդամի թափուր տեղերը լրացվում են այն ստորաբաժանումների կողմից, որոնց ներկայացուցիչների անդամությունը դադարեցվել է:

III Գիտական խորհրդի աշխատակարգը

19. Խորհրդի հերթական նիստերն անցկացվում են ամիսը մեկ անգամ: Նիստերի անցկացման վայրը և օրը որոշում է խորհրդի նախագահը:

20. Հրատապ հարցերի քննարկման համար արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի նախագահի որոշմամբ կամ խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Այդ մասին նրանք գրավոր առաջարկություն են ներկայացնում խորհրդի նախագահին՝ նշելով այն հարցերը, որոնց համար առաջարկվում է հրավիրել արտահերթ նիստ:
21. Խորհրդի նախագահը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում արտահերթ նիստի ժամկետի մասին: Արտահերթ նիստ անցկացնելու մասին խորհրդի անդամը տեղեկացվում է նիստից առնվազն 1 օր առաջ:
22. Խորհրդի նիստերը, նախագահի և/կամ տեղակալի որոշմամբ, կարող են անցկացվել նաև հեռակա (հարցման կարգով): Նշված դեպքերում առկա նիստի վարման կարգի վերաբերյալ դրույթները չեն գործում:
23. Յուրաքանչյուր նիստի օրակարգի նախագիծը հաստատվում է խորհրդի նիստի սկզբում, որի վերաբերյալ ընդունվում է որոշում:
24. Օրակարգի մասին առաջարկություն ներկայացնող անձն իրավունք ունի իր նախաձեռնությունը հետ վերցնելու, որի դեպքում այն չի քննարկվում:
25. Օրակարգային հարցի քննարկումը սկսվում է հարցը նախապատրաստողի զեկուցումով: Խորհուրդը նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ սահմանում է տվյալ հարցի քննարկման տևողությունը և կարգը:
26. Նիստի նախագահողը մտքերի փոխանակությանը մասնակցելու համար ձայնը տալիս է ըստ հայտերի ստացման հերթականության: Անհրաժեշտության դեպքում նա կարող է փոխել ելույթների հերթականությունը՝ հայտարարելով այդ փոփոխությունների պատճառները: Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

27. Պաշտոնականման մրցույթներ, կոչումների շնորհման վերաբերյալ որոշումներն ընդունվում են փակ (գաղտնի) քվեարկությամբ, խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Խորհրդի նիստը կարող է հետաձգվել, եթե դրա օգտին են քվեարկել նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

29. Խորհրդի ընդունած որոշումներն ուժի մեջ են մտնում Համալսարանի ռեկտորի կողմից վավերացնելու կամ համապատասխան հրամանն արձակելու պահից, եթե այլ ժամկետ նախատեսված չէ տվյալ որոշմամբ:

30. Խորհրդի նիստն արձանագրվում է: Արձանագրությունները ստորագրվում են խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից: